ՁԵՎ N 2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 18.11.2021 թ. N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության 2024 թ. իրականացված միջոցառումների վերաբերյալ

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն					
ծրագրի հերթական համարը	նպատակը	միջոցառումների անվանումները	միջոցառումների իրականացման արդյունքները	միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	ծանոթագրություն
1	2	3	4	5	6
6.	Համընդհանուր հասանելի և մատչելի սովորողակենտրոն հանրակրթական միջավայրի ստեղծում	6.6 Սովորողների մոտ մեդիագրագիտության հմտությունների զարգացում Ժամկետ՝ 2022-2024 թթ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Մեդիագրագիտության ուղղությամբ իրականացվել է. ➢ Մեդիագրագիտության ինտեգրում ՀՀ կրթական համակարգում, որն ուսուցիչների կրթության և վերապատրաստումների պարտադիր մասն է կազմում: Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշչում և օրինակելի ծրագրում ներառվել է «21-րդ դարի հմտությունների խթանում» բաժինը: ➢ Շարունակական մասնագիտական զարգացման նպատակով ընտրված դպրոցական առարկաների ուսուցիչների համար «Մեդիագրագիտություն» թեմայով դասընթացի մոդուլ և ուղեցույցների մշակում: ➢ ՀՀ վարչապետի N 1319-Լ որոշմամբ «Ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թթ. հայեցակարգի» հաստատում: ➢ Կրթական նորարարությունների բաժնի մասնագետների կողմից «Համացանցային հաղորդացություն. Նշաններ» նյութի մշակում և բաժնի բլոգում տեղադրում: ➢ Հասարակագիտություն առարկայի 11-րդ դասարանի առարկայական ծրագրում ներառված են հետևյալ վերջնարդյունքները. – Քննադատաբար վերլուծել տեղեկատվությունը, հասկանալ մեդիա ուղերձների ստեղծման գործընթացը, տարբերակի կիրառվող		

			մանիպուլյացիաները, ստեղծագործաբար և պատասխանատու կերպով կիրառել տեղեկատվական և թվային սարքերը որպես ժամանակակից աշխատանքային գործիք, իսկ համացանցը՝ որպես ուսումնական, համագործակցային և աշխատանքային հարթակ, - ստեղծել մեդիա բովանդակություն և կարողանալ տարածել իր ասելիքը մեդիայի տարբեր հարթակներում՝ գիտակցելով դրա հետևանքներն ու ազդեցությունը, պահպանելով էթիկան և համացանցից օգտվելու անվտանգության կանոնները:		
8.	Կառուցել, հիմնանորոգել և վերանորոգել առնվազն 300 հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ ապահովել դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով	8.4 Ցանկում ընդգրկված հաստատություններում շինարարական աշխատանքների իրականացում և անհրաժեշտ գույքով և սարքավորումներով հագեցվածության ապահովում Ժամկետ՝ 2022 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ-2026 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	2021-2024 թթ.. շահագործման է հանձնվել 38 դպրոց՝ այդ թվում կառուցում՝ 24, վերակառուցում՝ 3, վերանորոգում/հիմնանորոգում՝ 11:	Թերակատարումը պայմանավորված է շինարարական աշխատանքների սահմանված ժամկետները չպահպանելու հետ:	
11.	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների և դրանցում իրականացվող ծրագրերի տեղաբաշխման ռացիոնալացում	11.1 «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն /ՆՄՄԿ/ իրականացնող ուսումնական հաստատությունների վերակազմակերպում Ժամկետ՝ 2022-2026 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Տարվա ընթացքում վերակազմակերպվել են. - ՀՀ կառավարության 28.03.2024 թ. թիվ 436-Ա որոշմամբ ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Դիլիջանի պետական քոլեջ» և ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Դիլիջանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպվել են՝ ստեղծելով «Դիլիջանի բազմագործառութային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն: - ՀՀ կառավարության 07.11.2024 թ. N 1774-Ն որոշմամբ «Երևանի հենակետային բժշկական քոլեջ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորման ձևով վերակազմակերպվել է «Երևանի հենակետային պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության: Ընթացքում է. -ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող «Գորիսի պետական քոլեջ» և «Գորիսի պրոֆեսոր Խ.Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային		

			կազմակերպությունների միացման ձևով միաձուլման և «Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության ստեղծման գործընթացը: - ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող «Բյուրեղավանի արհեստագործական պետական ուսումնարան» և «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միացման ձևով միաձուլման և «Նոր Գեղիի բազմագործառութային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության ստեղծման գործընթացը: - ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող Երևանի թիվ 8 արհեստագործական պետական ուսումնարանի և Երևանի թիվ 9 արհեստագործական պետական ուսումնարանի միաձուլման գործընթացը:		
13.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի զբաղունակության բարելավում	13.1 Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտու-թյունների ցանկերի վերա-նայում, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտու-թյունների ցանկերը հաս-տատելու և ՀՀ կառավա-րության 2006 թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2024 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Վերանայվել և լրամշակվել են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկերը: Փաթեթը ներկայացվել է հանրային քննարկման և ՀՀ վարչապետի 11.12.2008 թ. N 1012-Ա որոշմամբ հաստատված Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդի քննարկմանը: Դեկտեմբերի 3-ին հրավիրվել է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդի նիստ՝ հեռակա քվեարկությամբ՝ էլեկտրոնային փոստի կիրառմամբ: Քվերակության արդյունքում (14 կողմ, 1 դեմ, 6 անդամ չի արձագանքել) վերանայված ցանկերը հաստատվել են:		

		13.2 «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաս-տատություններում փորձարարական կարգով աշխատանքի վրա հիմնված ուսուցման և դուալ ուսուցման համակարգի ներդրում Ժամկետ՝ 2022-2026 թթ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Մշակվել է աշխատանքի վրա հիմնված/դուալ ուսուցման 5 ծրագիր և 2024-2025 ուս.տարվանից ներդրվել ՄԿՈՒ 8 հաստատությունում: Մասնավորապես՝ ա) 0812.01.4 «Այգեգործություն» մասնագիտության 0812.01.02.4 «Պտղատու այգիների այգեգործ» որակավորումը, բ) 0811.13.5 «Կաթնաֆերմերային տնտեսության կազմակերպում» մասնագիտության 0811.13.01.5 «Կազմակերպիչ՝ կաթնա-ֆերմերային տնտեսության» որակավորումը, գ) 0716.17.5 «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնա-գիտության 0716.17.01.5 «Տեխնիկ՝ գյուղատնտեսության մեքենայացման» որակավորումը: 2024-2025 թթ.-ից 2 մասնագիտությունով դուալ ուսուցման ձևով ծրագրեր ներդրվել են Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում, մասնավորապես՝ ա) «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» մասնագիտության 0612.02.01.5 «Տեխնիկ՝ հաշվողական տեխնիկայի և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկման» որակավորումը, բ) 0413.01.5 «Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի)» մասնագիտության 0413.01.01.5 «Մենեջեր՝ առևտրի» որակավորումը: 2024 թ.-ի դրությամբ դուալ ուսուցմամբ կրթական ծրագրեր իրականացվել են 21 ՄԿՈՒ հաստատությունում 27 մասնա-գիտություններով: Արդյունքում՝ այս մոդելով իրականացվող մասնագիտությունների մասնաբաժինը հասել է 17%-ի, իսկ ուսումնական հաստատություններինը՝ 23%-ի:		
14.	ՆՄՄԿ հաստատությունների մարդկային ռեսուրսների հզորացում	14.1 ՆՄՄԿ իրականացնող հաստատությունների վարչական, կառավարման խորհուրդների անդամների, տարբեր աշխատանքային խմբերում ներգրավված ճյուղային և ոլորտային միությունների	➢ Տարվա ընթացքում իրականացվել են մասնագիտական կրթության համակարգի աշխատողների և համակարգի աշխատանքներում ներգրավված այլ անձնակազմերի անձանց համար վերապատրաստումներ, որոնց արդյունքում վերապատրաստվել է 909 անձ: Վերջին երեք տարիների ընթացքում վերապատրաստումներ են իրականացվել շուրջ 4500 անձի համար: ➢ MAVETA ծրագրի շրջանակներում իրականացվել են. - ՄԿՈՒ հաստատությունների և մասնավոր հատվածի շուրջ 100		

		ներկայացուցիչների, մանկավարժական անձնակազմի վերապատրաստում Ժամկետ՝ 2023-2026 թթ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ	ներկայացուցիչների մեթոդական և պրակտիկ մասնագիտական վերապատրաստումներ: - Մշակվել է «Տրակտորավար» կարճաժամկետ վերապատրաստման դասընթաց, որը հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից և տրամադրվել ՄԿՈՒ հաստատություններին: Այն արդեն կիրառվել է 2 ՄԿՈՒ հաստատությունում: ➢ Տարվա ընթացքում վերապատրաստում են անցել. - 170 տնօրեն և փոխտնօրեն՝ «ՄԿՈՒ հաստատությունների ռազմավարական կառավարում» թեմայով. - 44 ՄԿՈՒ հաստատությունների ղեկավարներ՝ «Կոռուպցիայի կանխարգելումը կրթության միջոցով» թեմայով: Մասնակցել է 816 մանկավարժական աշխատող:		
		14.3 ՆՄՄԿ հաստատությունների մանկավարժական կազմի ատեստավորում Ժամկետ՝ 2024-2026 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Մանկավարժների ատեստավորման համար նախապես ընտրված 4 ուղղություններով կազմակերպված վերապատրաստումներին մասնակցել է 361 անձ: Ատեստավորումը կազմակերպվել է նոյեմբերի 30-ին: Նախնական արդյունքներով վերապատրաստված 361 մանկավարժից ատեստավորվել է 310-ը: 310 ատեստավորվածներից 89% հաղթահարել են նվազագույն շեմը և համարվել են ատեստավորված: Ատեստավորման գործընթացը միտված է մանկավարժական անձնակազմի աշխատավարձի բարձրացմանը և ատեստավորման արդյունքներով կկիրառվի նաև 30%, 40%, 50% հավելավճար: Գործընթացը շարունակական է:		
		14.4 «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի որակավորման տարակարգերի շնորհման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում	- Մշակվել և ՀՀ կառավարության 05.12.2024 թ. N 1912-Ն որոշմամբ հաստատվել է «Մասնագիտական ուսումնական հաստատությունների ատեստավորված կամ տարակարգ ստացած մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխության և հավելավճարի սահմանման կարգը, որով կկանոնակարգվի մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների տարակարգ ստացած մանկավարժական աշխատողների հավելավճարի չափը: - ՀՀ ԿԳՄՍ նախարարի 27.11.2024 թ. № 77-Ն հրամանով հաստատվել է «Մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման կարգը, տարակարգի շնորհման հանձնաժողովի ձևավորման, դրա գործունեության և տարակարգի բնութագրիչները և տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ		

		Ժամկետ՝ 2024 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	փաստաթղթերի ցանկը», որն ուժ մեջ է մտել 2025 թվականի հունվարի 1-ից:		
15.	ՆՄՄԿ գրավչության, մատչելիության, բարձրացում, ներառականության ապահովում	15.2 Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների շենքային պայմանների բարելավում, վերակառուցում, վերանորոգում, բարեկարգում, շենքերի կառուցում Ժամկետ՝ 2023-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	- Ընթացքի մեջ են 6 ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման՝ վերանորոգման և կառուցման աշխատանքները, որից 1-ը՝ կառուցում, 1-ը ՝ վերակառուցում, 1-ը՝ հիմնանորոգում, 3-ը՝ մասնակի նորոգում: - 2 այլ ուսումնական հաստատությունում աշխատանքներն ավարտվել են և գտնվում են վերջնական փաստաթղթերի հանձնման-ընդունման՝ ավարտական ակտի կնքման փուլում: - 2 ուսումնական հաստատություն գտնվում են ՇՄԱԳ փորձաքննության փուլում: - 2 ուսումնական հաստատություն էլ գտվում է նախահաշվային փաստաթղթերի լրամշակման փուլում: Շենքային պայմանների բարելավման աշխատանքներն ավարտվել են 2 ուսումնական հաստատությունում, ընթացքի մեջ են 14.5% ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման աշխատանքները:		
17.	Բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելության սկզբունքների և մեխանիզմների վերանայում և ներառականության ընդլայնում	17.1 «ՀՀ կառավարության 2012 թ.-ի ապրիլի 26-ի 597-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2024 թ.ապրիլի 2-րդ տասնօրյակ 2025 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ կառավարության 12.04.2024 թ. N 488-Ն որոշմամբ բարձրագույն կրթության համակարգում ազգային փոքրամասնությունների համար 2024-2025 ուստարվա համար հատկացվել է 7 նպատակային տեղ, որոնք հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից բաշխվել են վճարովի համակարգ ընդունված առավել բարձր միավոր հավաքած ազգային փոքրամասնություններին պատկանող դիմորդներին: Ազգային փոքրամասնություններին հատկացվող տեղերի վերաբաշխման լիազարությունը հանրապետական ընդունող հանձնաժողովին վերապահված է ՀՀ կառավարության 04.26.2012 թ. N 597-Ն որոշման հաստատված կարգի 85-րդ կետի 4- րդ ենթակետով:		
18.	Տարածաշրջանային լեզուներով կրթության ապահովում	18.2. «Համապատասխան ուսումնական տարիներին 2 կրթական ծրագրով մինչև 8 անվճար տեղերի հատկացում» ՀՀ	ՀՀ կառավարության 25.05.2024 թ. N 605-Ն որոշմամբ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների 2024/2025 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով		

		կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2023-2025 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	«Ադրբեջանագիտություն» և «Վրացագիտություն» մասնագիտություններին հատկացվել են համապատասխանաբար **4-ական** ընդունելության տեղեր: ՀՀ կառավարության 12.05.2024 թ. N 488-Ն որոշմամբ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների 2024/2025 ուսումնական տարվա՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ **բակալավրի** ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով «Ադրբեջանագիտություն» մասնագիտութամբ հատկացվել է **5** անվճար տեղ:		
19.	Կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայում՝ ուղղելով դեպի ուսումնառության վերջնարդյունքներ՝ որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան	19.1 Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին համապատասխան որակավորումների ոլորտային շրջանակների (ՈՈՇ) մշակում և հաստատում ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով Ժամկետ՝ 2021-2025 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	2023 թ. մշակվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատվել է ընդհանուր 21 որակավորումների ոլորտային շրջանակ (ՈՈՇ)՝ Շինարարություն, Անասնաբուժություն, Ֆարմացիա, Գյուղատնտեսություն, Բժշկություն, Մանկավարժություն, Սոցիոլոգիա, Պատմություն, Ճարտարապետություն, Իրավագիտություն, Մաթեմատիկա, Ինֆորմատիկա, Սոցիալական աշխատանք, Ֆիզիկա, Երկրաբանություն, Փիլիսոփայություն, Քիմիա, Աշխարհագրություն, Սերվիս, Կենսաբանություն, Կառավարում: Բուհերում կրթական ծրագրերը մինչև 2024 թ. համապատասխանեցվել են հաստատված ՈՈՇ-ների վերջնարդյունքներին:		
		19.2 Կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայում՝ որակավորումների ոլորտային շրջանակներից բխող կրթական վերջնարդյունքների հիմքով Ժամկետ՝ 2022-2025 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից շարունակվում են ուսումնառության վերջնարդյունքներին միտված կրթական ծրագրերի լրամշակման աշխատանքները՝ հիմք ընդունելով հաստատված ՈՈՇ-ները՝ հաշվի առնելով նաև ոլորտի բարեփոխումներն ու նախանշված թիրախները, աշխատաշուկայի պահանջները: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ:		

20.	Ակադեմիական քաղաքի հիմնադրման հայեցակարգի մշակում	20.2 «Ակադեմիական քաղաքի հիմնադրման հայեցակարգից բխող միջոցառումների իրականացում Ժամկետ՝ 2024-2026 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Իրականացվել է. - ՀՀ կառավարության 22.08.2024 թ. N 1323-Ն որոշմամբ ընդունվել է «Երևան քաղաքի և ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: - ՀՀ կառավարության 26.09.2024 թ. N 1535-Ա որոշմամբ ընդունվել է «Մեկ անձից գնման ընթացակարգով գնման գործընթաց կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Որոշման շրջանակներում գերմանական ճարտարապետական հեղինակավոր ՋիԷմՓի ինթերնեյշնլ ՋիԷմԲիԷյջ արքիթեքթս ընդ էնջինիերս (GMP) ընկերության հետ համատեղ պատրաստվել է Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի հայեցակարգը և ամբողջացվում է գլխավոր հատակագծի վերջնականացման աշխատանքների համար պայմանագիրը: - ՀՀ կառավարության 26.09.2024 թ. N 1516-Ա որոշմամբ ընդունվել է՝ «Մեկ անձից գնման ընթացակարգով գնման գործընթաց կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով պայմանավորված «ԱրԷսՅուՓի Ռաբե Սթրաթիջիք Ուրբան Փլենինգ» գերմանական կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր, համաձայն որի՝ մեկնարկել է Ակադեմիական քաղաքի քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի մշակումը: - ՀՀ կառավարության 26.10.2024 թ. N 1645-Ա որոշմամբ ընդունվել է «Մեկ անձից գնման ընթացակարգով գնման գործընթաց կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Որոշման շրջանակում Սիստեմատիկա ԷսԱրԷլ իտալական ընկերության հետ կնքվել է «Տրանսպորտի և շարժունակության ուսումնասիրություն կատարելու ծառայությունների մատուցման» պայմանագիր, որով մեկնարկել է Ակադեմիական քաղաքի տրանսպորտային շարժունակության նախագծի մշակումը: - ՋիԷմՓի ինթերնեյշնլ ՋիԷմԲիԷյջ արքիթեքթս ընդ էնջինիերս ընկերությունից և Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի		

			հաստատման համար անհրաժեշտ փաթեթի պատրաստման ծառայությունները «Հայնախագիծ» ԲԲԸ-ից ձեռք բերելու նպատակով՝ մշակվել և ՀՀ արդարադատության ու ֆինանսների նախարարություններ է ներկայացվել «Մեկ անձից գնման ընթացակարգով գնման գործընթաց կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: - Մեկնարկել է նաև Ակադեմիական քաղաքի կառավարման շրջանակի, նորարարությունների կառավարման մոդելի, բուհերի և հետազոտական ինստիտուտների խոշորացման հայեցակարգի մշակումը: - Իրականացվել է նաև «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում խորհրդատվության, ինստիտուցիոնալ կառավարման և զարգացման տարբեր բնագավառներում փորձագիտական աջակցության, ինչպես նաև Հայաստանի արվեստների ուղղվածության երեք պետական համալսարաններում կրթության բովանդակության վերանայման և որակի ստուգմանն առնչվող հարցերում օժանդակություն: Կնքվել են հուշագրեր. արվեստների ուղղությամբ՝ Լոնդոնի արվեստների համալսարանի, կրթական ուղղությամբ՝ Լոնդոնի համալսարանական քոլեջի և տեխնոլոգիական ուղղությամբ՝ Մյունխենի տեխնիկական համալսարանի հետ:		
24.	Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ	24.1 ՀՀ ներկայացուցիչների մասնակցություն Բոլոնիայի հետամուտ խմբի և աշխատանքային խմբերի հանդիպումներին Ժամկետ՝ 2022-2025 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	2024 թ. շարունակվել է ՀՀ ներկայացուցիչների աշխատանքը Բոլոնիայի գործընթացի հետամուտ և աշխատանքային խմբերում: ՀՀ ԿԳՄՍՆ նախարարի 02.02.2024 թ. N 158-Ա հրամանով հաստատվել է Բոլոնիայի գործընթացի հետամուտ և աշխատանքային խմբերի՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչների նոր կազմը: - Ապրիլի 10-13-ը ԿԳՄՍՆ աշխատանքային խումբը ք. Բրյուսելում մասնակցել է Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի 91-րդ համդիպմանը և Որակի ապահովման եվրոպական ռեգիստրի գործակալության ընդհանուր ժողովին: -Մայիսի 28-30-ը ք. Տիրանայում կայացել են Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական համաժողովը և գլոբալ քաղաքականության ֆորումը:		

			- Հունիսի 13-14-ը ք. Կոնստանցայում կայացել է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակի ապահովման գործընկերային աջակցության խմբի տարեկան աշխատաժողովը: - Սեպտեմբերի 25-28-ը ք. Բուդապեշտում մասնակցություն է ցուցաբերվել է Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի հերթական 93-րդ համդիպմանը: ՀՀ կողմից ներկայացվել է «Որակի ապահովում» (TPG C Quality Assurance) թեմատիկ խմբի համանախագահության հայտ, որն ընդունվել է ԲԳՀԽ 93-րդ հանդիպման ընթացքում: ✓ ՀՀ-ն վերահաստատել է իր մասնակցությունը «Որակավորումների շրջանակ» (TPG A Qualifications Frameworks) և «Փոխճանաչում» (TPG B Recognition) թեմատիկ խմբերին: ✓ ՀՀ կողմից ներկայացվել է հայտ մասնակցելու «Միջազգայնացում և շարժունություն» աշխատանքային խմբին:		
26.	Գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում	26.2 «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2024-2028 թվականների գերակայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2024 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Մշակվել է «Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման 2025-2029 թթ. գերակայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Սակայն հաշվի առնելով, որ Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների զարգացման խորհրդի կողմից մշակվում է Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների զարգացման ռազմավարության նախագիծը, ինչպես նաև ընթացս մշակվել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի նախագիծը, որով հստակ սահմանվում են նաև գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանցման արդյունավետ համակարգի ձևավորումն ու զարգացումը, այդ իսկ պատճառով նպատակահարմար է Նախագիծը դիտարկել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի և Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների զարգացման ռազմավարության նախագծերի համատեքստում:		
27.	Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում	27.1 Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում ու համատեղ օգտագործման գիտական	2023-2024 թթ. ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարարի 15.05.2023 թ. N 691-Ա/2 և 07.11.2023 թ. N 2326-Ա/2 հրամանների համաձայն ձեռք բերված սարքերի (սարքավորումների) նվիրաբերության նպատակով՝ ՀՀ կառավարության 22.08.2024 թ. «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններին և գիտական կազմակերպություններին սարքեր (սարքավորումներ) նվիրաբերելու և բաշխման ցանկը հաստատելու մասին» N 1311-Ա		

		սարքավորումների կենտրոնների ստեղծում Ժամկետ՝ 2022-2026 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	որոշման համաձայն Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և վերոնշյալ որոշման հավելվածում նշված շահառու կազմակերպությունների միջև կնքվել են սարքերի (սարքավորումների) նվիրաբերության մասին 45 պայմանագրեր:		
		27.2 Գիտական կենտրոնների վերանորոգում Ժամկետ՝ 2022-2025 թթ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ի պատասխան ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 09.04.2024 թ. N 02/08.4/12961-2024 գրության՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 19.12.2024 թ. N 01/9.3.1/39827-2024 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել, որ միջոցառման իրականացումը ներկայումս համարվում է ոչ նպատակահարմար՝ հաշվի առնելով, որ ընթացքի մեջ են ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների խոշորացման և գիտահետազոտական կազմակեպությունների հետ ինտեգրման, ինչպես նաև «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացմանն ուղղված միջոցառումները:	**Համապատասխան առաջարկը ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից անձամբ զեկուցվել է ՀՀ վարչապետին, և վերջինիս կողմից տրվել է համաձայնություն: Վերոնշյալ տեղեկատվությունը ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել նաև 10.12.2024թ. N 01/9.3.1/38404-2024 գրությամբ:**	
		27.3 Հետազոտության բնագավառով մոտ փոքր գիտական կազմակերպությունները խոշոր գիտական կենտրոններում միավորմանն ուղղված պետական ծրագրերի իրականացում Ժամկետ՝ 2023-2026 թթ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ի պատասխան ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 09.04.2024 թ. N 02/08.4/12961-2024 գրության՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 19.12.2024 թ. N 01/9.3.1/39580-2024 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել, որ միջոցառման իրականացումը ներկայումս համարվում է ոչ նպատակահարմար՝ հաշվի առնելով, որ ընթացքի մեջ են ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների խոշորացման և գիտահետազոտական կազմակեպությունների հետ ինտեգրման, ինչպես նաև «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացմանն ուղղված միջոցառումներ:	**Համապատասխան առաջարկը ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից անձամբ զեկուցվել է ՀՀ վարչապետին, և վերջինիս կողմից տրվել է համաձայնություն: Վերոնշյալ տեղեկատվությունը ՀՀ վարչապետի աշխատակազմ է**	

				ներկայացվել N 01/9.3.1/38412-2024 գրությամբ:)	
		27.4 «Նորարարության և գիտատար ձեռնարկատիրության խթանմանն ու աջակ-ցությանն ուղղված տեխնոլոգիաների փոխանցման կառույցի ստեղծման մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2024 թ. նոյեմբերի 3–րդ տասնօրյակ	Ի պատասխան ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 29.11.2024 թ. N 02/08.4/40997-2024 գրության՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 17.12.2024 թ. N 01/9.1.3/39349-2024 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել տեղեկատվություն համապատասխան միջոցառման կատարումը տվյալ փուլում նպատակահարմար չլինելու և դրա հետագա իրականացման ժամկետների և մեխանիզմների վերանայման մասին:	**Համապատասխան առաջարկն ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից անձամբ զեկուցել է ՀՀ վարչապետի մոտ տեղի ունեցած աշխատանքային հանդիպման ընթացքում, որն ընդունվել է ի գիտություն և նոր հանձնարարական-ներ չեն տրվել:**	
28.	Գիտության ոլորտում աշխատողների որակա-վորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում	28.1 Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտություններին աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.06.2024 թ. N 1005-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպվել է «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2024» մրցույթը, որի շրջանակներում ներկայացված 71 հայտերից ֆինանսավորման է երաշխավորվել 65 գիտական նախագիծ:		
		28.2 Հետդոկտորական հետազոտությունների ծրագրերի իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.11.2023 թ. N 2282-Ա/2 և 07.03.2024 թ. N 347-Ա/2 հրամանների համաձայն կազմակերպվել է «Մասնագիտական վերապատրաստում 2024» և «Մասնագիտական վերապատրաստում 2024/2» մրցույթները: Առաջին մրցույթի արդյունքում ներկայացվել է 14 հայտ, ֆինանսավորման երաշխավորվել՝ **13**-ը: Երկրորդ մրցույթի շրջանակներում ներկայացվել է 25 հայտ, 23-ը ներկայացվել է գիտական փորձաքննության, իսկ ֆինանսավորման երաշխավորվել՝ **17**-ը: Այսպիսով, **30** երիտասարդ հետազոտող՝ Հայաստանի տարբեր գիտական կազմակերպություններից,		

			հնարավորություն է ստացել մասնագիտական վերապատրաստում անցնել և հետդոկտորական հետազոտություններ կատարել ԱՄՆ-ի, Կանադայի, Գերմանիայի, Չինաստանի և այլ երկրների առաջատար համալսարաններում ու գիտական կենտրոններում:		
		28.3 Արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման իրականացում Ժամկետ՝ 2023-2026 թթ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.11.2023 թ. N 2282-Ա/2 և 07.03.2024 թ. N 347-Ա/2 հրամանների համաձայն կազմակերպվել է «Մասնագիտական վերապատրաստում 2024» և «Մասնագիտական վերապատրաստում 2024/2» մրցույթները: Առաջին մրցույթի արդյունքում ներկայացվել է 14 հայտ, ֆինանսավորման երաշխավորվել՝ **13**-ը: Երկրորդ մրցույթի շրջանակներում ներկայացվել է 25 հայտ, ֆինանսավորման երաշխավորվել՝ **17**-ը: Շահառու նախագծերի կատարողները հնարավորություն են ստացել արտերկրի առաջադեմ գիտական կազմակերպություններում կամ բուհերում անցնել մինչև 12 ամիս տևողությամբ վերապատրաստում:		
29.	Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում	29.1 Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացի իրականացում Ժամկետ՝ 2022-2025 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Իրականացվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթաց՝ համաձայն ՀՀ կառավարության 13.05.2021 թ. «ՀՀ կառավարության 2001 թ. նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 747-Լ որոշմամբ ներդրված 2022-2025 թթ. բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի նվազագույն պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցների աղյուսակի:		

		29.2 «Գիտական կադրերի համապետական ատեստավորման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2024 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Մշակվել է «Գիտական կադրերի համապետական ատեստավորման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Սակայն հաշվի առնելով, որ համապատասխան իրավական ակտի ընդունման համար օրենսդրությամբ ՀՀ կառավարության համար լիազորող նորմ նախատեսված չէ, ուստի ՀՀ ՎԱ կողմից առաջարկվել է նախաձեռնել նախագծի ընդունման համար իրավական հիմք ստեղծելու գործընթաց: Վերջինովս պայմանավորված համապատասխան լիազորող նորմը կնախատեսվի «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի նախագծի շրջանակում:		
		29.3 «Գիտական կազմակերպությունների կատարողականի գնահատման մեթոդաբանությունը և կատարողականի հիման վրա միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ Ժամկետ՝ 2022 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2024 թ.ապրիլի 2-րդ տասնօրյակ 2025 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	«Գիտական կազմակերպությունների կատարողականի գնահատման մեթոդաբանությունը և կատարողականի հիման վրա միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը նպատակահարմար չէ, քանի որ գիտական կազմակերպությունների կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման գործիքները ներառվել են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային և գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ձևերով պետական ֆինանսավորման կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում, որը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	Համապատասխան տեղեկատվությունը ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի ապրիլի 4-ի N 01/9.1.1/10667-2024 գրությամբ, ինչպես նաև համապատաս-խան առաջարկն անձամբ զեկուցվել է ՀՀ վարչապետին, որին տրվել է համաձայնություն:	

		29.4 Վերաինտեգրման կամ հեռավար ղեկավարվող լաբորատորիաների ստեղծում Ժամկետ՝ 2022-2026 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	2024 թ. գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպվել են «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024», «ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում 2024», «ՀՀ գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2024»», «ՀՀ գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2024/2»», «ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում 2024/2» մրցույթներ: Մրցույթների արդյունքներով 2024 թ. առկա են ՀՀ վերադարձած շուրջ 13 գիտնականի կողմից ղեկավարվող գիտական ստորաբաժանումներ և 18 հեռավար ղեկավարվող գիտական խմբեր, որոնք գիտական ժամանակակից հետազոտություններից զատ իրականացնում են նաև բարձր տեխնոլոգիական ոլորտում ստեղծագործական աշխատանքի ընդունակ կադրերի պատրաստում:		
		29.9 Գերակա ուղղություն-ներով հետազոտություն-ների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում Ժամկետ՝ 2024 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Գիտական և գիտատեխնոլոգիական գործունեության գերակա ուղղություններով հետազոտություններին աջակցելու նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 14.11.2023 թ. N 2368-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպվել է «Հեռանկարային ուղղություններ 2024» մրցույթը: Այն ուղղված է կարևորագույն և հեռանկարային ուղղություններով ինովացիոն բնույթի մրցունակ և բարձր սոցիալ-տնտեսական ազդեցություն ունեցող առաջադեմ գիտահետազոտական նախագծերի իրականացմանը: Մրցույթին ներկայացվել է գիտական նախագծերի 62 հայտ, որոնցից 20-ը գիտական փորձաքննության արդյունքում երաշխավորվել է ֆինանսավորման: Նախագծերն ընդգրկում են գիտական և գիտատեխնիկական գործունեության արհեստական բանականություն և տվյալագիտություն, քվանտային տեխնոլոգիաներ, ռոբոտատեխնիկա, կենսատեղնոլոգիա և մարդու լավարկում, նյութագիտություն, կանաչ գործարք բնագավառները, որոնցում ներառված են նաև խելացի գյուղատնտեսություն, քիմիա, ֆիզիկա, մաթեմատիկա մասնագիտությունները:		
32.	Մշակութային ժառանգության	32.2 «Գրադարանների և գրադարանային գործի	Գրադարանների և գրադարանային գործի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի		

	բնագավառի օրենսդրության կատարելագործում	մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2024 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ կառավարություն: Նախագիծը ընդունվել է ՀՀ կառավարության 12.04.2024 թ. N 504-Ա որոշմամբ: 2024 թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Գրադարանների և գրադարանային գործի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:		
33.	Հայ մշակույթի հանրահռչակում, հանրային լայն մասնակցության ապահովում մշակութային կյանքին	33.1 Թանգարաններում և գրադարաններում կրթական ծրագրերի իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող 19 թանգարաններում՝ ներառյալ մասնաճյուղերում, իրականացվել է 2497 (41-ը ներառական) կրթական ծրագիր, որոնց մասնակցել են տարբեր տարիքային և սոցիալական խմբերի, այդ թվում՝ սահմանափակ կարողություններով շահառուներ: Ընդհանուր մասնակիցների թիվը կազմել է 49070 մասնակից, որից՝ 514-ը սահմանափակ կարողություններով շահառուներ: Նախարարության ենթակայության 12 գրադարաններում իրականացվել է 187 կրթական ծրագիր, որն ունեցել է 7847 մասնակից, որից՝ 460-ը՝ սահմանափակ կարողություններով անձիք:		
		33.2 Հուշարձանների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Իրականացվել են 78 կրթական ծրագրեր, 230 տեղեկատվական արշավներ, 87 արտաքին գովազդի հարթակներ և 7 գիտաժողովներ:		
		33.3 Հայաստանում միջազգային և հանրապետական փառատոների և մրցույթների, ստեղծագործական նախագծերի,	Իրականացվել է ավելի քան 66 միջոցառում, որոնք միտված են եղել հայկական մշակույթի և ժամանակակից արվեստների զարգացմանն և տարածմանը, մարդկանց հոգևոր պահանջ-մունքների բավարարմանը, ստեղծարար, տաղանդավոր անհատ արվեստագետների համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, պատմամշակութային միջավայրի ճանաչելիության բարձրացմանը, հավատարիմ, մշտական հանդիսատեսի լսարանի		

	ցուցահանդեսների իրականացում (այդ թվում՝ Դաշտադեմի ամրոցում «Զարկ ֆեստ» (Յարխուշտա), ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ փառատոների իրականացում) Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ձևավորմանը, մասնավորապես՝ 16 միջազգային և 9 հանրապետական փառատոն, 16 հոբելյանական ծրագիր և այլն:		
	33.4 Արվեստի քննադատների ինստիտուտի ակտիվացում Ժամկետ՝ 2023-2024 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	«Թատերակետեր» ծրագրի շրջանակներում ֆեյսբուքյան և այլ հարթակներում պարբերաբար հրապարակվել են թատերական գրախոսականներ: Երաժշտարվեստի ոլորտում նույնպես պարբերաբար հրապարակվում են վերլուծական հոդվածներ: Արվեստի քննադատները մշտապես ներկա են գտնվում թատերական և երաժշտական փառատոներին, ներկայացումներին, համերգներին և ցուցահանդեսներին:		
	33.5 Համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության իրազեկման և կրթամշակութային ծրագրերի իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ 10 մարզերի համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության իրազեկման և կրթամշակութային ծրագրերի իրականացման նպատակով իրականացվել է 8 ծրագիր: Կրթամշակութային ծրագրերում ընդգրկված են եղել ՀՀ Շիրակի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի 650 շահառուներ, ՀՀ Գեղարքունիքի մարզի 5 համայնքների 70 շահառուներից գրի են առնվել տեղական խաղեր, որոնց մասին նկարահանվել է 5 ֆիլմ: Ծրագրի շրջանակում ՀՀ 8 մարզերի 40 համայնքների 24 «Արար» կենտրոններում դասավանդել են 18 տեղաբնակ մասնագետներ, սովորում են 7-17 տարեկան շուրջ 900 երեխաներ ու պատանիներ, որոնց ուսուցանվում են ոչ նյութական մշակութային ժառանգության 10 ուղղություններ: Իրականացվել է Վրաստանի Ախալքալակի շրջանի 8 համայնքների ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրում և էլեկտրոնային գրքի հրատարակում, որի միջոցով մոռացումից կփրկվի տարածքի հայկական մշակութային ժառանգությունը, կապահովվի ոչ միայն լայն հասարակության,		

			այլև երիտասարդության շրջանում դրա իրազեկման, ճանաչելիության բարձրացման ու կենսունակության խթանումը:		
		33.6 Դպրոցականների համար բաժանորդային ծրագրի իրականացում Ժամկետ՝ 2023-2026 թթ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Տարվա ընթացքում ծրագրի իրականացման արդյունքում շուրջ 300000 դպրոցական անվճար այցելել են երեք մշակութային հաստատություն՝ թանգարան, թատրոն և դասական երաժշտության համերգասրահ:		
34.	Մշակութային ժառանգության թվայնացում, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնում	34.1 Ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանի համալրում Ժամկետ՝ 2022-2026 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	«ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգություն» շտեմարան՝ https://int-heritage.am/ յուրաքանչյուր ամիս մուտքագրվել են 3 եռալեզու հոդված, 10 նորություն, 2 հայտարարություն և 2 տեսանյութ: ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանում ներառված «Ուտեստների շտեմարանը» համալրվել է ՀՀ 10 մարզերի 44 համայնքների 151 տարրով: Նոր դաշտ է ստեղծվել «Արհեստների փառատոն» խորագրով, որտեղ ներկայացվում են նյութեր, տեսանկարահանումներ և լուսանկարներ 2022-2024 թթ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան և ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքներում իրականացված «Արհեստների միջազգային փառատոների» վերաբերյալ: Շտեմարանում ավելացել է նոր բաժին՝ «Խաղերի շտեմարան», որտեղ առկա է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ պատրաստված «Հայկական ավանդական խաղերի շտեմարան» ձեռնարկը, ինչպես նաև տեսադարան: Կայքի տեսադարան դաշտը համալրվել է ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտին վերաբերող 30 տեսանյութերի հղումներով: Շտեմարանի այցելությունների թիվը 2024 թ. ընթացքում կազմել է 31.577, իսկ դրան կից ֆեյսբուքյան էջի հետևորդների թիվը ներկայում 4923 է:		
		34.2 Գրադարաններում էլեկտրոնային սպասարկման ծրագրի ներդնում «ԿՈՀԱ» (Հայաստանյան գրադարանների	- Շիրակի մարզային գրադարանում ամսվա ընթացքում էլեկտրոնային ընթացակարգով սպասարկվել է 3987 ընթերցող, տրամադրվել է 20198 միավոր գիրք: - Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում էլեկտրոնային սպասարկումը միաժամանակ ներդրվել է		

		էլեկտրոնային համա-հավաք գրացուցակ) ծրագրի շրջանակում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ընթերցասրահի և մամուլի, 9-12 դասարանցիների և օտարալեզու հավաքածուի սպասարկման ենթաբաժիններում: Սպասարկվել է 15934 ընթերցող, տրամադրվել է 127097 միավոր գիրք:		
		34.3 Թանգարանային հավաքածուների թվայնացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Թվայնացվել և մշակութային արժեքների «Գանձարան» էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան է մուտքագրվել 37100, հաստատվել՝ 26980 թանգարանային առարկայի վերաբերյալ թվային տեղեկույթ:		
35.	Օտարերկրյա պետություններում հայկական գրավոր ժառանգության պահպանություն և հանրահռչակում	35.1 Արտերկրում հիմնված հայկական կրթական և մշակութային կենտրոններում, համայնքային նշանակության, ինչպես նաև անհատական գրադարաններում, պահպանված հայկական գրավոր ժառանգության Հայաստան տեղափոխման «Լքյալ գրադարաններ» ծրագիր Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	- **Չիլիում և Պերուում** ՀՀ դեսպանությանը անհատների կողմից փոխանցվել է 2 գիրք՝ «Հայկական Մանրանկարչություն» և նույն գրքի ֆրանսերենը՝ «Minaturesa Armeniennes»: - Օգոստոսի 20-ին պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմակերպելու **Իրանի Իսլամական Հանրապետության** արխիվի, մասնավորապես՝ Մեծ հայրենադարձության շրջանում Իրանից հայերի հայրենադարձությանը վերաբերող և ՀՀ ազգային արխիվում առկա 1976թ. Մոհամմադ Ռեզա Փահլավիի՝ Հայաստան այցի վերաբերյալ նյութերի փոխանակումը: - **Իսրայելում** ՀՀ դեսպանությունն իրականացրել է իսրայելցի հանրահայտ ցեղասպանագետ Իսրայել Չարնիի՝ Մեծ Եղեռնին վերաբերող արխիվը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ տեղափոխելու ծրագիրը: Իրականացվել է ծրագրի երեք փուլ: - **Եգիպտոսում** հայազգի երաժիշտ-խմբավար մաեստրո Եդուարդ Յակոբեանի ընտանիքի անդամները ՀՀ դեսպանություն են փոխանցել երաժիշտի գրքերի հավաքածուն՝ խնդրելով այն տեղափոխել Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան:		

		35.2 Արտասահմանյան գրադարանների համալրում հայագիտական գրականությամբ Ժամկետ՝ 2023-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Հայաստանի պատմությունը, մշակույթն ու արվեստը օտար լեզուներով ներկայացնող 2000-ից ավելի գրքերով են համալրվել արտերկրի 500 կարևոր գրադարանների ֆոնդեր: Առաքված գրականության թվում են եղել «Համաշխարհային ժառանգության վայրերը Հայաստանում», «Սյունյաց հոգևոր միջնաբերդը. Տաթև», «Համր կինոյի խոսուն կանայք» անգլերեն հրատարակությունները և մի շարք այլ գրքեր:		
36.	Ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայրի ապահովում	36.1 «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագիր Ժամկետ՝ 2021-2026 թթ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Ծրագրի շրջանակում ընդհանուր առմամբ ֆինանսավորվել է 25 պարբերական, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների համար Հայաստանում լույս տեսնող 7, գրական տպագիր և էլեկտրոնային 10, մշակութային տպագիր և էլեկտրոնային 8 պարբերականներ, որոնք ամբողջ տարվա ընթացքում լույս են տեսել տպագիր և էլեկտրոնային տարբերակներով:		
		36.2 «Աջակցություն գրականության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը» ծրագիր Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	- Հայաստանը հոկտեմբերի 16-20-ը առանձին տաղավարով մասնակցել է գրահրատարակչության ոլորտում աշխարհի ամենահեղինակավոր Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցա-հանդես-տոնավաճառին: Հայաստանյան պատվիրակության կազմում են եղել շուրջ տասը հրատարակչություններ, գրավաճառներ և գործակալություններ: Ներկայացվել է վերջին տարիների գրահրատարակչական արտադրանքը՝ շուրջ 200 գիրք, միջոցառումներին մասնակցել է 4 գրող և գրաքննադատ: - Սեպտեմբերի 6-8-ը Հայաստանի ազգային պատկերասրահում իրականացվել է Գրքի երևանյան միջազգային փառատոնը: Այն գրականության և գրահրատարակչության ոլորտի ամենամեծ ծրագիրն է: Եռօրյա փառատոնի բաղադրիչներն են եղել՝ պարտադիր զեղչով գրքի ցուցահանդես-տոնավաճառը, «Պոեզիա», «Արձակ», «Դրամատուրգիա» և «Մանկապատանեկան գրականություն» անվանակարգերում գրական մրցույթը, շնորհանդեսները, պանելային զրույցները, վարպետության դասերը, համերգները, գրքախաղերը, պոեզիայի ընթերցումները, գրական ստենդափը, գրական բաթլները, ներկայացումները, հայ և արտասահմանյան գրողների հետ բացառիկ հանդիպումները և այլն: Փառատոնին մասնակցել են շուրջ 250 գրողներ Հայաստանից, Իտալիայից, Իսպանիայից, Սլովենիայից, Ռուսաստանից, Վրաստանից: Փառատոնն ունեցել է 30000-ից		

			ավելի այցելու, վաճառվել է շուրջ 12000 գիրք, մասնակցել են 50-ից ավելի հրատարակչություններ, գործակալություններ, գրավաճառներ և մշակութային կազմակերպություններ, տեղի է ունեցել 27 միջոցառում:		
		36.3 Մշակույթի տարբեր ոլորտներում ստեղծագործական ծրագրերի աջակցություն՝ դրամաշնորհների հատկացման բաց-մրցութային համակարգի միջոցով, ինչպես նաև դեբյուտային ստեղծագործական ծրագրերի և արվեստի փորձարարական և նորարարական ձևերի խրախուսում Ժամկետ՝ 2021-2026 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Մշակույթի տարբեր ոլորտներում դրամաշնորհների հատկացման բաց-մրցութային համակարգի միջոցով 8 անվանակարգում աջակցություն է ցուցաբերվել 62 նախագծի, ինչպես նաև 2 դեբյուտային ստեղծագործական և 4 նորարարական ծրագրերի:		
39.	Մշակութային ժառանգության պահպանության ներառականության ապահովում, հասարակության խոցելի խմբերի համար մշակույթին հաղորդակից լինելու իրավունքի իրացում	39.1 «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի ընդլայնում Ժամկետ՝ 2023-2026 թթ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ մարզերի և Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի շուրջ 849 տարեցներին և սահմանափակ կարողություններ և հնարավորություններ ունեցող շահառուներին մատուցվել են գրադարանային ծառայություններ:		
		39.2 Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ներառական ծրագրեր Ժամկետ՝ 2021-2026թթ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	Իրականացվել է 6 ծրագիր՝ 1. Կրթիր կրթողին. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 30 արցախցիներ մասնակցել են հայկական ավանդական ձեռարվեստի եռամսյա դասընթացներին՝ տիրապետելով թաղիքագործության, ասեղնագործության, կավագործության գիտելիքներին և հմտություններին. 2.«Սասնա ծռեր» էպոսի հանրահռչակում. լուսաձայնային անիմացիոն ցուցադրանք. «Հայ դյուցազնավեպի քոչարյան		

			պատումը» անիմացիան ցուցադրվել է Սասունցի Դավիթ արձանի վրա, իրականացվել են 2 կրթամշակութային ծրագիր, որին մասնակցել են 3 հանրակրթական դպրոցների շուրջ 200 աշակերտ. 3. Ափդեյթ 4. Երգվող երգեր. մշակվել են ՀՀ Գեղարքունիքի մարզից հավաքագրված 10 երգ, կազմակերպվել են 4 մարզային համերգաշարեր՝ հանրայնացնելով ու վերարժևորելով տեղական ոչ նյութական մշակութային ժառանգությունը. 4. «Կծեգ» Արցախի բարբառների հանրահռչակում. Լեռնային Ղարաբաղի տարբեր շրջանների բարբառներով թատերական ներկայացում է բեմադրվել «Դիզակ ԱՐՏ» թատերախմբի 11 սաների մասնակցությամբ, որը ներկայացվել է Երևանում, ՀՀ Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի և Տավուշի մարզերում. 5. Հայկական ավանդական նվագարանների պատրաստման ուսուցման ծրագիր. ծրագրում ներառված 4 աշակերտները նվագարանագործ վարպետի ղեկավարությամբ մշակել են ժողովրդական–փողային (շվի, բլուլ) գործիքների իրանների փայտերը և որպես վերջնարդյունք ներկայացրել փորված անցքերով 2 գործիքների իրաններ. 6. Տոները Ջավախքում. իրականացվել է Վրաստանի Ախալքալակի շրջանի համայնքների ավանդական ու նորօրյա տոների վերաբերյալ նյութերի հավաքագրում, սոցիալական հարթակներում հանրահռչակում, էլեկտրոնային գրքի հրատարակում.		
		39.3 Հասարակության խոցելի խմբերի համար նպատակային միջոցառումների կազմակերպում Ժամկետ՝ 2021-2026 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Իրականացվել է. 10 կրթամշակութային ներառական միջոցառում, այդ թվում՝ - **«Ֆրեսկո»** արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային ներառական փառատոնը, - **«Hope for dream»** կրթամշակութային ծրագիրը, - **«Խոսող կտավներ»** նախագիծը**,** **- «Կողք-կողքի»** ներառական երաժշտական արտ միջազգային փառատոնը, - «**Խոսող կտավներ. Շունն ու կատուն»** նախագիծը,		

			- **«Ճախրուկ»** ամենամյա միջազգային 4-րդ ներառական փառատոնը, - **«Զատկական»** փառատոնը, - **«Կամավորի ներառական դպրոց»** նախագիծը, - **«Ներառականությունը մշակութային կրթության ոլորտում»** ծրագիրը, - **«Ճախրուկ»** էթնո երաժշտախմբի համերգ՝ նվիրված հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան: - «Տեսողության սահմանափակ կարողություն ունեցող անձանց համար Բրայլյան տառատեսակով գրքերի տպագրություն, տետրերի պատրաստում, - «Խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններ» ծրագրով հատկացվել է 9786,6 հազար դրամ, որն ուղղվել է 92328 էջ Բրայլյան տառատեսակով գրքերի և ամսագրերի հրատարակությանը և 180 ժամ աուդիոգրքի ձայնագրությանը:		
40.	Մշակույթի կառավարման ժամանակակից համակարգերի ներդրում	40.1 Ոլորտի կազմակերպությունների մարքեթինգի, սեգմենտացիայի, թիրախավորման, դիրքավորման, գիտելիքների և ռեսուրսների ձևավորում, դասընթացների իրականացում Ժամկետ՝ 2022-2024 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Միջոցառման շրջանակներում իրականացվել են. - 12-շաբաթյա ինկուբատոր, որը ստեղծարար նախագծերը կամ բիզնեսները ուղղորդում է գաղափարի փուլից մինչև բիզնես պլանի փուլ: - 12-շաբաթյա աքսելերատոր, որտեղ արդեն գոյություն ունեցող ստեղծարար նախագծերը, արտադրանքները և բիզնեսները ստանում են մենթորություն, աշխատարաններ և ֆինանսավորում: - 8-շաբաթյա կարիերայի աքսելերացիա օգնելու ստեղծագործողներին կառուցելու իրենց անհատական բրենդը ֆինանսավորման և թրեյնինգների միջոցով: - Մշակութային հաստատություններին աջակցող ծրագիր՝ բարելավելու իրենց կայունությունը թրեյնինգների և ֆինանսավորման միջոցով:		
		40.2 Ֆոնդահայթայթման կարողությունների զարգացում Ժամկետ՝ 2022 թ.նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	- ԵՄ համագործակցության շրջանակներում. «ԱրտՆեքսուս» ծրագրով իրականացվել են սեմինարներ, դասընթացներ, որոնք նվիրված են եղել ֆոնդահայթայթման կարողությունների զարգացմանը: Երևանում մարտ և հոկտեմբեր ամիսներին կայացել է 2 դասընթաց, որին մասնակցել է 70 մարդ: - ՀԲՀՄ և EU4Culture ծրագրով, ինչպես նաև «Ստեղծագործ Եվրոպա» հայաստանյան գրասենյակի կողմից մարզերում		

		2024 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	իրականացվել են սեմինարներ, դասընթացներ, նվիրված մարզերի համայնքային և հասարակական կազմակերպություն-ների ֆոնդահայթայթման կարողությունների զարգացմանը: - Տարվա ընթացքում «Մշակութային ֆոնդահայթայթում» դասընթացներին մասնակցել են 30 ՊՈԱԿ-ների աշխատակ-իցներ, ինչպես նաև արտերկրից ժամանած ներկայացուցիչներ: - Դեկտեմբերի 4-13-ը Երևանում կայացել է «Սոլիդարտ» ժամանակակից արվեստ և պետական կառավարում» միջազգային համաժողովը:		
		40.3 «Կառավարման կարողությունների զարգացում» դասընթացների իրակա-նացում Ժամկետ՝ 2022թ. նոյեմ-բերի 3-րդ տասնօրյակ 2024 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Տարվա ընթացքում «Ստեղծագործ Եվրոպա» հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվել են հանդիպումներ և սեմինարներ, դասընթացներ նվիրված պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կառավարման կարողությունների զարգացմանը: «Կառավարման կարողություն-ների զարգացում» դասընթացներին մասնակցել են 45 ներկայացուցիչ՝ 24 կազմակերպությունից: Նշյալ դասընթացներին մասնակցել են նաև «Արվեստի կառավարում» մասնագիտությամբ սովորող ուսանողները:		
41.	Ինքնազբաղ/ անկախ ստեղծագործողների հանրային ինստիտու-տիցիոնալացում	41.1 Ինքնազբաղ/ անկախ ստեղծագործողների գործունեության խթանում Ժամկետ՝ 2022-2023 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	- Ինքնազբաղ/անկախ 137 արվեստագետների հետ կազմա-կերպվել է 161 համերգ: - Աջակցություն է ցուցաբերվել 24 անհատ կատարողի մասնակցությանը միջազգային մրցույթների, փառատոների, բիենալեների, վարպետության դասերի, մասնավորապես՝ Դելփյան խաղերին, Մալթայի, Համբուրգի երաժշտական մրցույթներին, Բելգիայի և Ռուսաստանի «Արաբեսկ» բալետի միջազգային միցույթին:		
		41.2 Կինոնկարների արտադրություն Ժամկետ՝ 2022-2026 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Միջոցառման շրջանակում աջակցություն է տրամադրվել ընդհանուր թվով 36 կինոնախագծի՝ արտադրության տարբեր փուլերի համար (զարգացման, արտադրական, հետարտադ-րական), որից 14-ը իրականացվում են համատեղ արտա-դրությամբ: - Խաղարկային կինոնախագծեր՝ 16 • կարճամետրաժ՝ 6		

			• լիամետրաժ՝ 10, որից՝ 3-ը զարգացման փուլի, 4 արտադրություն (որից՝ 2-ի ավարտը 2025 թ.), 2 հետարտադրական փուլի, 1 տարածման փուլի: Խաղարկային լիամետրաժ կինոնախագծերից 5-ը իրականացվում են համարտադրությամբ: - Վավերագրական կինոնախագծեր՝ 11 • կարճամետրաժ՝ 2 • լիամետրաժ՝ 9, որից՝ 3-ը զարգացման փուլի, 4 արտադրություն, 2 հետարտադրական փուլի: Վավերագրական լիամետրաժ կինոնախագծերից 5-ը իրականացվում են համարտադրությամբ: - Անիմացիոն կինոնախագծեր՝ 9 • կարճամետրաժ՝ 7, որից 3-ի ավարտը՝ 2025 թ. • լիամետրաժ՝ 2, որից 1-ը զարգացման փուլի, 1-ը արտադրություն (ավարտը՝ 2025 թ.): Անիմացիոն ֆիլմերից 4-ը իրականացվում են համարտադրությամբ:		
42.	Մշակույթի մեկենասու-թյան ինստիտուտի ներդրում և կայացում և պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնմանն ուղղված փոխշահավետ մեխանիզմների խթանում	42.1 Մշակույթի մեկենասի հանրային վարկանիշի ձևավորում, մեկենասության պետական խրախուսում տեղեկատվական դաշտում Ժամկետ՝ 2024-2025 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում ստորագրվել են 3 հուշագրեր՝ • «Կատապուլտ» ծրագրի շրջանակներում «ՖաբԼաբ Արմենիա» կրթական հիմնադրամի հետ, • Հայկական բարեգործական ընդհանուր միության հետ՝ միջազգային մշակութային էքսպոներին «Ֆաստեքս» կազմակերպության կողմից աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ, • Գաֆէսճեան արվեստի կենտրոնի հետ Վենետիկի արվեստի միջազգային 60-րդ բիենալեի հայկական պաշտոնական տաղավարի ֆինանսավորման վերաբերյալ: - «Ֆաստեքս» կազմակերպության և Գաֆէսճեան արվեստի կենտրոնի կողմից ֆինանսավորվել է Վենետիկի արվեստի միջազգային 60-րդ բիենալեի հայկական պաշտոնական տաղավարը: - «Ֆաստեքս» կազմակերպության կողմից աջակցություն է		

			ցուցաբերվել թատերահամերգային կազմակերպությունների սանհանգույցների նորոգմանը, - «Սիմոն Մանուկեան» հիմնադրամը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել «Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ին, - «Վերածնունդ» հիմնադրամը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին:		
		42.2 Բարերարների հետ համագործակցություն, պետական միջոցներով կազմված վերականգնման նախագծերի անվճար տրամադրում, մասնագիտական խորհրդատվություն, հուշագրերի ստորագրում, մեկենասության տարեգրքի համար տեղեկատվության տրամադրում Ժամկետ՝ 2022–2026 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Տարվա ընթացքում կնքվել է 2 հուշագիր, որից մեկը միջազգային կազմակերպության հետ՝ (բարերար Արայիկ Մնացականյան) Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղի Սբ Հովհաննես եկեղեցու պահպանման և վերականգնման վերաբերյալ, իսկ երկրորդը «Հակամարտությունների գոտիներում ժառանգության պաշտպանության դաշինք»-ի հետ՝ ՀՀ պատմամշակութային հուշարձանների և օբյեկտների կամ մշակութային հաստատությունների և դրանց հավաքածուների պահպանության կամ վերականգնման շուրջ համագործակցության:		
43.	Թատերահամերգային կազմակերպություններում նյութատեխնիկական բազայի արդիացում	43.1 Մշակութային հաստատությունների գույքի և նյութատեխնիկական բազայի բարելավում Ժամկետ՝ 2024-2026 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	- «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Հայաստանի պետական ֆիլհարմոնիա» ՊՈԱԿ-ի համար ձեռք է բերվել 2 «Steinway & Sons» մակնիշի համերգային ռոյալ: - «Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ» ՊՈԱԿ-ի համար ձեռք է բերվել 15 անուն երաժշտական գործիքներ, բարելավվել է հաստատության գույքն և նյութատեխնիկական բազան: - Թվով 8 ՊՈԱԿ-ների համար ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից կազմվել է գույքի գնման 14 հայտ՝ 48 չափաբաժնով: Իրականացված մրցութային ընթացակարգերի արդյունքում կնքվել են համապատասխան մատակարարման 6 պայմանագիր՝ 27 չափաբաժնով: 4 չափաբաժին ընթացքային փուլում է, 17 չափաբաժին չի կայացել:		

45	Մշակութային-կրթական նպատակային ծրագրերի իրականացում	45.1 «Դասարան +Դասա-կան» ստեղծագործական կրթական ծրագրի իրականացում Ժամկետ՝ 2021-2026 թթ.դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Մարտի 23-ից ապրիլի 11-ը Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում իրականացվել է «Դասարան+դասական» թատերական կրթական ծրագիրը: Նախագծի հիմնական թիրախային խումբը 14-18 տարեկան երեխաներ են: 250 հայտատուներից ընտրվել և ծրագրին մասնակցել են **70 պատանիներ**՝ ՀՀ մարզերից ու Երևանից: Ծրագրի ընթացքում մասնակիցներն աշխատել են խմբերով՝ իրենց մենթոր-ղեկավարների և դասախոսների ղեկավարությամբ: Ձևավորվել է 6 խումբ՝ 2 դրամատիկ, 1 մնջախաղ, 1 պարային, 1 մյուզիքլ, իսկ վեցերորդում համադրվել է բեմանկարչությունը, բեմազգեստն ու երաժշտական ձևավորումները: Ծրագրի մասնակիցները դերասանի վարպետության դասերին և փորձերին զուգահեռ մասնակցել են տեսական դասախոսությունների:		
		45.2 Ներառական փառա-տոնների կազմակերպում, մշակույթի ոլորտի մասնագետների, արվեստագետների հետ համատեղ միջոցառումների իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ.դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	• Իրականացվել է ներառական նպատակային ծրագրեր, միջոցառումներ, որին համատեղ մասնակցել են «Գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի սաները, մասնավորապես՝ կազմակերպվել է. - «Մշակութային խաչմերուկ» նախագիծը, - «Պատմություններ տարածաշրջանից» նախագիծը, «Սերգեյ Փարաջանով և Շառլ Ազնավուր 100» հոբելյանական ծրագիրը, - Համահայկական նկարչական մրցույթ-փառատոնը, - «Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային ներառական փառատոնը, - «Զատկական փառատոն» ծրագիրը: • «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշմանդամություն ունեցող, ծնողազուրկ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և սոցիալապես անապահով Երևանի և ՀՀ 11 մարզերի 972 երեխաների համար իրականացվել է արվեստի և արհեստների ոլորտներում անվճար ուսուցում 146 խմբերում: • Մասնագիտական կադրերի կատարելագործման նպատակով ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ Երևանում, ՀՀ Լոռու,		

			Շիրակի, Կոտայքի, Արարատի և Արագածոտնի մարզերում իրականացվել է «Ներառականությունը՝ մշակութային կրթության ոլորտում» խորագրով՝ «Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներ» ծրագիրը, որին մասնակցել է 40 ուսումնական հաստատության 306 մանկավարժ: Ծրագիրն իրականացվել է ներառական ոլորտի հայաստանյան 6 և արտերկրի 5 առաջատար մասնագետների միջոցով:		
		45.3 Երևանի և մարզերի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» կրթական նպատակային ծրագրի իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Մշակութային ապակենտրոնացման և տարածքային համաչափ զարգացման, արտադպրոցական ուսուցում իրականացնող հաստատությունների միջև կապեր ստեղծելու, ինչպես նաև համատեղ աշխատանքի և փորձի փոխանակման հարթակ տրամադրող «Քույր դպրոցներ» կրթական նպատակային ծրագրի շրջանակում Երևանի երաժշտական և արվեստի դպրոցները մարզերի քույր դպրոցների հետ իրականացրել են հագեցած մշակութային ծրագրեր, վարպետության դասեր, ճանաչողական այցելություններ Երևանի և ՀՀ մարզերի պատմա-մշակութային և տեսարժան վայրեր: Ծրագրում ներառված են հանրապետության 60 երաժշտական և արվեստի դպրոցներ: Միջոցառումներին մասնակցել են շուրջ 500 աշակերտներ և մանկավարժներ: Կազմակերպվել է 20 միջոցառում, 60 վարպետության դաս:		
		45.4 «Քո արվեստը դպրոցում» ծրագիր Ժամկետ՝ 2021-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերի և Երևանի հանրակրթական դպրոցներում տեղի են ունեցել 50 հանդիպում 50 արվեստագետների հետ: Հանդիպումներին մասնակցել են 532 դպրոցի 6650 աշակերտ և 582 ուղեկցող մանկավարժ:		
		45.5 «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի իրականացում Ժամկետ՝ 2021-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	«Մեկնարկ» նպատակային ծրագրում ընդգրկված են 11-20 տարեկան 15 տաղանդավոր երաժիշտ-կատարող (դաշնամուր, ջութակ, թավջութակ): Ծրագրի մասնակիցները մասնակցել են Հայաստանում և արտերկրում կազմակերպված շուրջ 62 միջոցառումների:		
		45.6 «Երաժշտական և արվեստի դպրոցների	«Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում»		

		համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում» ծրագրի իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ծրագրի շրջանակներում հրատարակվել է 14 ուսումնամեթոդական ձեռնարկ:		
48	Միջազգային հեղինակավոր մարզական միջոցառումներին մասնակցության ապահովում, Հայաստանի Հանրապետության մարզական հեղինակության բարձրացում, միջազգային մրցասպարեզներում բարձր մարզական արդյունքների ցուցաբերում	48.3 2024 թվականի Փարիզի ամառային օլիմպիական խաղերին ՀՀ մարզական պատվիրակության մասնակցության ապահովում Ժամկետ՝ 2024 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Հուլիսի 26-ից օգստոսի 11-ը Ֆրանսիայի Փարիզ քաղաքում կայացած ամառային 33-րդ օլիմպիական խաղերին մասնակցել է ՀՀ պատվիրակության 15 մարզիկ ութ մարզաձևերից՝ ծանրամարտ, հունահռոմեական ըմբշամարտ, ազատ ոճի ըմբշամարտ, լող, սպորտային մարմնամարզություն, հրաձգություն, աթլետիկա և բռնցքամարտ: Նվաճել են 4 մեդալ՝ 3 արծաթե և 1 բրոնզե:		
49	Մանկապատանեկան սպորտի զարգացում	49.1 «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2022-2026 թթ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	«Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովում ծրագրի շրջանակում ՀՀ կառավարության 2024 թ. մայիսի 23-ի թիվ 769-Ա որոշման համաձայն՝ 96 մարզական կազմակերպությունների հատկացվել է 105 անուն մարզական գույք:		

50	Բնակչության տարբեր տարիքային խմբերի համար զանգվածային սպորտի տարածմանը և առողջ ապրելակերպի քարոզմանն ուղղված ծրագրերի իրականաց-ման անընդհատության ապահովում	50.1 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի անցկացում Ժամկետ՝ 2021-2023 թթ. մայիսի 3-րդ տասնօրյակ 2024-2026 թթ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Մրցաշարն անցկացվել է երկու փուլով. 1-ին փուլ՝ սեպտեմբերիի 20-25-ը՝ ՀՀ մարզերում, ք. Երևանում, 2-րդ եզրափակիչ փուլ՝ սեպտեմբերի 28-29-ը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ-Շողակաթ համայնքների ճանապարհի 20 կմ հատվածում: Միջոցառմանը մասնակցել են հանրակրթական դպրոցների և վարժարանների 10-12 դասարանների հավաքական թիմերը: 705 դպրոցից ընդհանուր առմամբ մասնակցել է 1410 աշակերտ: Միջոցառման 1-3-րդ տեղեր գրաված դպրոցների թիմերը, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները և մասնակիցները պարգևատրվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության հավաստա-գրերով, գավաթներով, մեդալներով և դրամական պարգևներով: 1-ին տեղը գրաված դպրոցը պարգևատրվել է՝ 4,000.000, 2-րդ տեղը՝ 2,500.000, 3-րդ տեղը՝ 1,500.000 ՀՀ դրամով: Պարգևատրվել են նաև մրցանակային տեղեր զբաղեցրած դպրոցի ուսուցիչները. 1-ին տեղը՝ 700,000, 2-րդ տեղը՝ 500,000 և 3-րդ տեղը՝ 300,000 ՀՀ դրամով: Մրցաշարի հաղթող թիմերի աշակերտները պարգևատրվել են դրամական մրցանակներով. 1-ին տեղը՝ 150,000, 2-րդ տեղը՝ 100,000, 3-րդ տեղը՝ 75,000 ՀՀ դրամ:		
		50.2 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի անցկացում 2024-2026 թթ. մայիսի 3-րդ տասնօրյակ	Մրցաշարն անցկացվել է 3 փուլով՝ 1-ին փուլ՝ ապրիլի 1-12-ը՝ ՀՀ մարզերի համայնքներում և Երևան քաղաքի վարչական շրջաններում, 2-րդ փուլ՝ ապրիլի 15-23-ը՝ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում, 3-րդ՝ եզրափակիչ փուլ՝ ապրիլի 27-28-ը՝ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում: Մրցաշարը անցկացվել է երկու խմբերով՝ 1-ին տարիքային խումբ՝ միևնույն դպրոցի 5-9-րդ դասարանների աշակետներից կազմված թիմերով, 2-րդ տարիքային խումբ՝ միևնույն դպրոցի 10-12-րդ դասարանների աշակետներից կազմված թիմերով: Միջոցառման պարգևատրման արարողությունը իրականացրել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ՀՀ կառավարության անդամները: Միջոցառմանը ՀՀ **626** հանրակրթական դպրոցներից ընդհանուր առմամբ մասնակցել է **3162** աշակերտ: Միջոցառման 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրաված դպրոցների		

			թիմերը, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները և մասնակիցները պարգևատրվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով և դրամական պարգևներով: Յուրաքանչյուր տարիքային խմբում 1-ին տեղ գրաված դպրոցը պարգևատրվել է՝ 4,000.000, 2-րդ տեղը՝ 2,500.000 և 3-րդ տեղը՝ 1,500.000 ՀՀ դրամով, պարգևատրվել են նաև դպրոցի ուսուցիչները՝ 1-ին տեղ՝ 700,000, 2-րդ տեղ՝ 500,000 և 3-րդ տեղ՝ 300,000 ՀՀ դրամ: Մրցաշարի հաղթող թիմերի աշակերտները յուրաքանչյուր տարիքային խմբում պարգևատրվել են դրամական մրցանակներով. 1-ին տեղ՝ 150,000-ական, 2-րդ տեղ՝ 100,000-ական, 3-րդ տեղ՝ 75,000-ական ՀՀ դրամ:		
		50.3 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարի անցկացում Ժամկետ՝ 2024-2026 թթ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Մրցաշարն անցկացվել է օգոստոսի 17-ին մեկ փուլով՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի (նախկին Շորժա) հանրային լողափի տարածքում: Տղամարդիկ մասնակցել են 1.5 կմ լողատարածության պայքարում, իսկ կանայք՝ 1 կմ լողատարածությունում: Մրցաշարն անցկացվել է երկու տարիքային խմբով՝ 18-40 տարեկան կանայք և տղամարդիկ, 41 և բարձր տարիքի կանայք և տղամարդիկ: Միջացառմանը մասնակցել են նաև օտարերկրյա քաղաքացիներ: Միջոցառման պարգևատրման արարողությունն իրականացրել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ՀՀ կառավարության անդամները: Միջոցառմանը մասնակցել է 136 մարդ: Մրցաշարի շրջանակներում մասնակիցներին տրամադրվել է՝ սնունդ, վերնաշապիկներ, գլխարկներ, հավաստագրեր, շնորհակալա-գրեր, դրամական պարգևներ: Ընդհանուր առմամբ 40 մասնակից (տղամարդ և կին) պարգևատրվել է դրամական մրցանակներով՝ առաջին տեղի համար սահմանված է 1 մլն, երկրորդ տեղի համար՝ 500 հազար, երրորդ տեղի համար՝ 300 հազար, չորրորդ տեղի համար՝ 100 հազար և 5-10-րդ տեղեր գրավածների համար՝ 50-հազարական դրամ:		

		50.4 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» խճուղավազքի մրցաշարի անցկացում Ժամկետ՝ 2024-2026 թթ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	Մրցաշարն անցկացվել է մեկ փուլով. հոկտեմբերի 19-ին՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար-Էջմիածին մայրուղու ընտրված ճանապարհահատվածում: Մրցաշարը անցկացվել է երեք տարիքային խմբով և աթլետիկայով զբաղվող գործող աթլետ մարզիկների առանձին խմբով՝ 1-ին տարիքային խումբ՝ 2007-2011 թթ. ծնված դպրոցականների համար (4 կմ) տղաներ և աղջիկներ, 2-րդ տարիքային խումբ՝ 18-40 տարեկան (1984-2006 թթ. ծնված) կանայք և տղամարդիկ (10 կմ), 3-րդ տարիքային խումբ՝ 41 և բարձր տարիքի (1983 թ. և բարձր) կանայք և տղամարդիկ (10 կմ), և աթլետիկայով զբաղվող գործող մարզիկների խումբ՝ առանց տարիքային սահմանափակման կանայք և տղամարդիկ (10 կմ): Մրցաշարին մասնակցել են նաև օտարերկրյա քաղաքացիներ: Միջոցառման պարգևատրման արարողությունը իրականացրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Մրցաշարին մասնակցել է 2480 մարդ: Մասնակիցներին տրվել են՝ վերնաշապիկներ, հավաստագրեր, շնորհակալագրեր: 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները (տղամարդիկ և կանայք) պարգևատրվել են խոշոր դրամական մրցանակներով՝ առաջին տեղի համար սահմանված էր 1 միլիոն, երկրորդ տեղի համար՝ 500 հազար, երրորդ տեղի համար՝ 300 հազար ՀՀ դրամ: Դրամական մրցանակներով են պարգևատրվել նաև 4-10-րդ տեղեր գրաված մասնակիցները՝ 4-րդ տեղը՝ 100 հազար ՀՀ դրամ, 5-10-րդ տեղերը՝ 50-հազարական ՀՀ դրամ:		
		50.5 Մասսայական սպորտին առնչվող ծառայությունների իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ծրագրի շրջանակում իրականացվել է **3** մասսայական միջոցառում. **1.«ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառում.** Միջոցառումն անցկացվել է 4 փուլով, որին մասնակցել է՝ 481 դպրոցի 1-3-րդ դասարանների 4808 աշակերտ, 520 դպրոցի 4-6-րդ դասարանների 5196 աշակերտ: Ընդհանուր առմամբ միջոցառմանը մասնակցել է 10004 աշակերտ:		

			2. ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա. Սպարտակիադան անցկացվել է 4 փուլով, որին մասնակցել են շուրջ 12088 աշակերտներ: Մրցանակային տեղեր գրված համայնքները պարգևատրվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով և դրամական պարգևներով: 1-ին տեղ գրված Երևան քաղաքը (700 միավոր) պարգևատրվել է 450000 դրամով: 2-րդ տեղ՝ Շիրակի մարզը (620 միավոր) 350000 դրամով: 3-րդ տեղ՝ Կոտայքի մարզը (565 միավոր) 250000 դրամով: Մրցանակային գումարները տրամադրվել են մարզագույք ձեռք բերելու համար: **3. Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր.** Հոկտեմբերի 23-26-ը ՀՀ պաշտպանության նախարարության մարշալ Հովհաննես Բաղրամյանի անվան Արմավիրի ուսումնական զորամասում անցկացվել Է նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի եզրափակիչ փուլի մրցումները 6 մարզաձևից՝ նռնակի նետում («Ֆ-1» ուսումնական), 8 կգ-անոց ուսապարկով փոխանցավազք (4 x 50 մ), ձգումներ պտտաձողից, կրոսավազք (1000 մ), հրաձգություն, ինքնաձիգի քանդում-հավաքում: Խաղերին մասնակցել են հանրակրթական դպրոցների 10-12-րդ դասարաններից ձևավորված հավաքական թիմերը: Խաղերն անցկացվել են 4 փուլով: Խաղերի եզրափակիչ փուլի մրցումներին մրցանակային 1-ին տեղ գրավել է Արագածոտնի մարզի Ագարակի միջնակարգ դպրոցը, 2-րդ տեղ՝ Շիրակի մարզի Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցը և 3-րդ տեղ՝ Գեղարքունիք մարզի Ճամբարակի ավագ դպրոցը: Թիմերի անդամները և դպրոցները պարգևատրվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության հավաստագրերով, մեդալներով, գավաթներով,		

			նվերներով և մարզագույքով: Շնորհակալագրերով և մարզագույքով են պարգևատրվել 4-11-րդ տեղեր գրաված ՀՀ Վայոց ձորի, Արարատի, Կոտայքի, Սյունիքի, Տավուշի, Լոռու, Արմավիրի մարզի և Երևան քաղաքի դպրոցները: Խաղերին մասնակցել են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների շուրջ **17500** աշակերտ:		
		50.6 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի անցկացում Ժամկետ՝ 2024-2026 թթ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Խճուղավազքը անցկացվել է 2 փուլով. **1-ին փուլ՝** մայիսի առաջին տասնօրյակ՝ ՀՀ մարզերում, Երևան քաղաքում, **2-րդ՝** եզրափակիչ փուլ՝ մայիսի 18-19-ին՝ ՀՀ Տավուշի մարզի Պարզ լճի ճանապարհին (5 կմ հատվածում): Խճուղավազքի եզրափակիչ փուլը անցկացվել է երկու օրով: Միջոցառման պարգևատրման արարողությունը իրականացրել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ՀՀ կառավարության անդամները: Միջոցառման 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրաված դպրոցների թիմերը, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները և մասնակիցները պարգևատրվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով և դրամական պարգևներով: 1-ին տեղ գրաված դպրոցը պարգևատրվել է՝ 4,000.000, 2-րդ տեղը՝ 2,500.000 և 3-րդ տեղը՝ 1,500.000 ՀՀ դրամով: Պարգևատրվել են նաև դպրոցի ուսուցիչները՝ 1-ին տեղ՝ 700,000, 2-րդ տեղ՝ 500,000 և 3-րդ տեղ՝ 300,000 ՀՀ դրամ: Մրցաշարի հաղթող թիմերի աշակերտները պարգևատրվել են դրամական մրցանակներով. 1-ին տեղ՝ 150,000-ական ՀՀ դրամ (7 մասնակից), 2-րդ տեղ՝ 100,000-ական ՀՀ դրամ (7 մասնակից), 3-րդ տեղ՝ 75,000-ական դրամ (7 մասնակից): Միջոցառմանը ՀՀ հանրակրթական 362 դպրոցներից ընդհանուր առմամբ մասնակցել է 2415 աշակերտ:		
51	Պետական երիտասարդական քաղաքականության իրավական հիմքերի կատարելագործում	51.1 «Երիտասարդության մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2024 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Միջոցառման կատարումն ապահովելու նպատակով ԿԳՄՍ նախարարությունը նախաձեռնել էր «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակման մասնակցային գործընթաց: Նախագիծը անցել է պաշտոնական հանրային քննարկման փուլը, շրջանառվել գերատեսչություններով, տեղադրվել է հանրային քննարկումների e-draft էլեկտրոնային հարթակում, որից հետո լրամշակվել և սահմանված կարգով ուղարկվել է ՀՀ կառավարության հաստատմանը: Սեպտեմբերի 17-ին Նախագիծը քննարկվել է Սոցիալական նախարարական կոմիտեի նիստում: Կոմիտեն	Նախագծին հավանություն տալու ՀՀ կառավարության որոշման ընդունման սահմանված ժամկետից՝ 2024 թ.-ի հուլիսի 3-րդ տասնօրյակից, ուշացումը հետևանք է շահագրգիռ կողմերի	

			առաջարկել է նախագծերի փաթեթը ևս մեկ անգամ քննարկել ՀՀ արդարադատության նախարարության, ֆինանսների նախարարության, վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի, իրավաբանական, տարածքային զարգացման և շրջակա միջավայրի հարցերի վարչությունների հետ, համաձայնեցնել վարչապետի հետ և նախագծերի փաթեթի լրամշակված, շահագրգիռ մարմինների հետ փոխհամաձայնեցված տարբերակը ներկայացնել վարչապետի աշխատակազմ: Նշված գերատեսչությունների և ՀՀ կառավարության համապատասխան վարչությունների հետ քննարկումների արդյունքում Նախագծի լրամշակված և փոխհամաձայնեցված տարբերակը հոկտեմբերի 16-ին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Նոյեմբերի 7-ին Նախագիծը հավանության է արժանացել Կառավարության կողմից՝ N 1763-Ա որոշմամբ: Դեկտեմբերի 17-ին «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի նախագիծն քննարկվել է ԱԺ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի կողմից հրավիրված խորհրդարանական լսումներում:	(պետական գերատեսչություններ, ՏԻՄ, ՔՀԿ, երիտա-սարդական նախաձեռնող խմբեր, երիտասարդներ) պահանջով Նախագծի մշակման բարձր մասնակցայ-նությամբ պայմանավորված՝ քննարկումների և լրամշակումների մի քանի փուլերի իրականացման:	
52	Հայաստանի մարզային համայնքներում երիտա-սարդության ներուժի բացահայտման, համա-կողմանի զարգացման, ինքնիրացման, ինքնադր-սևորման և ինտելեկտուալ ժամանցի կազմակերպ-ման համար նպաստավոր միջավայրի ձևավորում	52.2 Աջակցություն «երիտասարդական միջավայրի» ձևավորմանը Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Միջոցառման իրականացման համար դրամաշնորհային մրցույթի արդյունքում հաղթող են ճանաչվել՝ «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն», «Արարատի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն», «Պանդո» համայնքային զարգացման և «Կապանի երիտասարդական կենտրոն» հասարակական կազմակերպությունները: Ստեղծվել են կենտրոններ՝ Ծովագյուղում, Արարատում, Ախուրյանում, Կապանում:		
53	Հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացմանը երիտասարդ-ների մասնակցության բարձրացում	53.3 Ժողովրդավարական և քաղաքացիական մասնակցության, կոռուպցիայի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանն ուղղված	Կազմակերպվել են դասընթացներ երիտասարդներին թրաֆիքինգի ռիսկերի իրազեկման վերաբերյալ: ՀՀ Կոտայքի մարզի երիտասարդների շրջանում իրականացվել են թեմային առնչվող 12 դասընթացներ: Դասընթացներին մասնակցել են 300 երիտասարդներ: Ստեղծվել է թեմատիկ 1 սոցիալական գովազդի տեսահոլովակ		

		հանրային միջոցառումների կազմակերպում ազգային մակարդակով՝ ներառելով հաշմանդամություն ունեցող երիտասարդներին Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	(https://www.youtube.com/watch?v=2jCxUtx9MQo&t=17s), տպագրվել է բրոշյուր-գրքույկ՝ 1000 օրինակ (https://t.ly/haScM): Այն տրամադրվել է դասընթացների մասնակից երիտասարդներին, ծրագրում ընդգրկված դպրոցների գրադարաններին և ոլորտում մասնագիտացված ուսուցիչներին՝ արտադասարանական ուսուցման ընթացքում կիրառելու նպատակով:		
		53.4 Մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացում՝ ուղղված մեդիագրագիտությանը, թվային գրագիտությանը և կիբեռգրագիտությանը Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ծրագիրն իրականացվել է. ՀՀ սահմանամերձ (Սյունիք, Վայոց Ձոր, Գեղարքունիք, Տավուշ, Շիրակ, Լոռի) մարզերից և ԱՊՀ երկրներից (Ռուսաստան, Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան) ներկայացված 16-30 տարեկան երիտասարդների համար: Ծրագրի 2 միջոցառումներին մասնակիցել է **418** երիտասարդ: Ծրագրի շրջանակում պատրաստվել է առցանց հարթակ, որտեղ ներկայացվել են «ԱՊՀ երկրներում տարածված մեդիամանիպուլյացիաներն ու կիբեռհանցագործությունները երիտասարդների դիտարկմամբ» միջազգային երիտասարդական մեդիա կոնֆերանսին ներկայացված հոդված-պատմությունները (16 հոդված), ինչպես նաև համանուն վերնագրով տեղեկատվական-ուսումնական տեսաֆիլմ (https://youthmediaconferanse.tilda.ws/, https://www.youtube.com/watch?v=a_QIhnmxJql):		
54	Երիտասարդության սոցիալ-տնտեսական խնդիրների բարելավում և մասնագիտական կարողությունների զարգացում	54.1 «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Միջոցառման մեկնարկից սկսած ՀՀ պետական բյուջեից շարունակում է սուբսիդավորում ստանալ 6781 եիտասարդ ընտանիք: Միջոցառման համար 2024 թ. 12 ամիսների փաստացի ֆինանսավորումը կազմում է 2 032 347 429 դրամ՝ 6781 ընտանիքի համար: 2024 թ. ընթացքում ծրագրի շահառուների թիվն ավելացել է 741-ով: 741 ընտանիքից ՝ 678-ը ձեռք է բերել բնակարան/բնակելի տուն երկրորդային շուկայից, այդ թվում՝ 530-ը ՝ մարզերում, 48-ը ՝ Երևանում 63 ընտանիք ձեռք է բերել բնակարան առաջնային շուկայից: Ընդհանուր առմամբ մինչ այժմ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի	Միջոցառման մասնակի կատարումը պայմանավորված է 2023 թ. համեմատ անշարժ գույքի գների փոփոխությամբ:	

			հնարավորություններից օգտվել և շարունակում է օգտվել 8818 ընտանիք (թիվը ներառում է 2010-2024 թթ. և՛ շարունակական, և՛ բարեհաջող մարված, և՛ դասակարգված վարկերը), որից 3475-ը ընտանիք Երևան քաղաքում, իսկ 5343 ընտանիք մարզերում: Ընդ որում 237 ընտանիք զրկվել է պետական սուբսիդավորման հնարավորությունից և դադարել օգտվել ծրագրից՝ վերջինիս պահանջներին չհետևելու պատճառով:		
		54.2 Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդության իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ծրագիրն իրականացվել է ՀՀ Սյունիքի մարզում: Ծրագրի առաջին գործողության շրջանակում իրականացվել են մասնագիտական և անձնային աճի համար կոշտ և փափուկ հմտությունների ձևավորմանը միտված **12** դասընթացներ՝ առկա և հեռավար ձևաչափերով: Դասընթացներին մասնակցել են 139 երիտասարդ՝ ՀՀ Սյունիքի մարզի բոլոր յոթ համայնքներից: Ստեղծվել են էլեկտրոնային դասընթացներ Google Classroom միջավայրում, որոնք ապահովել են դասընթացների դասավանդման և ուսումնառության նյութերի հասանելիություն նաև դասընթացների ավարտից հետո: Մարզի համայնքների շուրջ 20 դպրոցներում իրականացվել են մասնագիտական կողմնորոշման այցեր: Դասընթացներից բացի, կազմակերպվել է աշխատանքի տոնավաճառ: Տոնավաճառին մասնակցել են Գորիս համայնքի աշխատուժի պահանջարկ ունեցող 17 գործատու ընկերություններ տարբեր ոլորտներից՝ ֆինանսաբանկային, SS, կրթական, հասարակական և այլն: Ներկայացվել են 40-ից ավել թափուր աշխատատեղեր: Գործատուների հետ նախնական պայմանավորվածություն են ձեռք բերել 12 երիտասարդ:		
		54.3 Երիտասարդության ֆինանսական գրագիտության բարձրացման, ինչպես նաև կոռուպցիայի վերաբերյալ դասընթացների կազմակերպում	Գյումրի, Ամասիա և Արթիկ համայնքներում ձևավորված 4 երիտասարդական խմբերի համար կազմակերպվել և անցկացվել է թեմատիկ դասընթացներ և «Խնայողությունների խաղ»: ԱՊՀ անդամ երկրներում ձևավորված 2 երիտասարդական խմբերի համար կազմակերպվել և անցկացվել են ֆինանսական գրագիտության բարձրացման 1-ին խմբում 30 ժամ տևողությամբ և 2-րդ խմբում 15 ժամ տևողությամբ դասընթացներ:		

		Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Դասընթացներին ընդհանուր մասնակցել են 68 ուսումնառու ՀՀ Շիրակի մարզի Ամասիա, Արթիկ համայնքներից, Գյումրի քաղաքից և 32 ուսումնառու ԱՊՀ անդամ երկրներից:		
		54.4 Աջակցություն երիտասարդների սոցիալական ձեռներեցության նախաձեռնություններին Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ծրագրի շրջանակներում մշակվել են սոցիալական ձեռնարկատիրության ոլորտի կրթական նյութեր, ոչ ֆորմալ բնույթ ունեցող 3-օրյա դասընթացներ՝ առերես և առցանց ձևաչափերով: Փորձագիտական թիմի կողմից ընտրված 10 մասնակիցների համար նախատեսվել է իրականացնել մենթորություն կամ քոուչինգ և հիմնել **10** սոցիալական ձեռնարկություններ: Ծրագրին մասնակցել է 107 երիտասարդ: Ընտրված մասնակիցների կազմում ընդգրկված են եղել նաև ԼՂ-ից բռնի տեղահանված 25 երիտասարդներ: Դասընթացներն անցկացվել են Երևան, Լճաշեն և Դիլիջան համայնքներում: Վերոնշյալ ծրագրային գործողությունների վերջնարդյունքում թվով **10** լավագույն սոցիալական ձեռնարկատիրության ծրագրերի տրամադրվել է ֆինանսական աջակցություն, կնքվել են պայմանագրեր սոցիալական ձեռնարկատիրության բիզնես գործունեությունը սկսելու նպատակով:		
		54.6 Բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացման առկա հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում երիտասարդության շրջանում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ծրագիրն իրականացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզում: Ծրագրի նպատակն էր զարգացնել ՀՀ Կոտայքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում բնակվող տեղացի և Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երիտասարդների՝ առաջին օգնության և անձնական անվտանգության հմտությունները: Ծրագրի շրջանակներում կազմակերպված դասընթացներին մասնակցել են 64 երիտասարդներ:		

55	Երիտասարդության ոլորտում համահայկական և միջազգային համագործակցության զարգացում	55.1 Միջազգային փառատոներին, խորհրդաժողովներին, մրցույթներին, գիտաժողովներին, սեմինարներին, դասընթացներին և այլ հանրային միջոցառումներին ՀՀ երիտասարդների և երիտասարդական պատվիրակությունների մասնակցության աջակցություն Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Երիտասարդների՝ միջազգային հարթակներում տարատեսակ միջոցառումներին մասնակցության աջակցության շրջանակում ավիատոմսի ծախսի փոխհատուցման նպատակով ներկայացվել է 58 հայտ, որից 21 ստացել են փոխհատուցում:		
57	Սփյուռքի կրթօջախների կարողությունների հզորացում	57.1 Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Միջոցառումն իրականացվել է հուլիսի 1-26-ը՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կողմից: Միջոցառման արդյունքում վերապատրաստմանը մասնակցել են սփյուռքահայ 60 ուսուցիչներ՝ 14 երկրներից: Դասընթացները կազմակերպվել են ուսումնական 7 խմբերում:		
		57.2 «Սփյուռքի ուսուցիչների գնահատման բնութագրիչները հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի ընդունում Ժամկետ՝ 2024 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ ԿԳՄՍ նախարարի 28.10.2024 թ. N 52-Լ հրամանով հաստատվել են սփյուռքի ուսուցիչների գնահատման բնութագրիչները, որոնք ուղղված են ապահովելու սփյուռքի համար ՀՀ հանրակրթության բովանդակությանը համահունչ կրթական որակյալ և արդյունավետ ծառայություններ, ինչպես նաև սփյուռքում գործող հայկական կրթօջախների հնարավորին չափ ինտեգրումը Հայաստանի կրթական համակարգին:		